Արձանագրություն N1

(ժողովը գումարվել է 2023թ. սեպտեմբերի 13-ին)

Ժողովին ներկա էին 1-12-րդ դասարանների աշակերտների ծնողները:

Օրակարգում՝

1.Օրակարգի հաստատում:

(զեկ.՝ Ն.Սահակյան)

2. 2023-24 ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ դպրոցի տնօրենի ուղերձը ծնողական կոլեկտիվին:

(զեկ.՝ Ա.Սարուխանյան)

3.Դպրոցի ԾԽ նախագահի հաշվետվությունը 2022-23 ուստարվա կատարած աշխատանքների մասին:

(զեկ.՝ Ն. Սահակյան)

4. «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրով դպրոցի նախակրթարանի սաներին և 1-4-րդ դասարանների աշակերտներին տաք սնունդ տրամադրելու մասին:

(զեկ.՝ Ա.Սարուխանյան)

5. 2022-23 ուստարվա դպրոցի ներքին գնահատման հաշվետվություն:

(զեկ.՝ Ա.Սարուխանյան)

6. 2023-24 ուստարվա ԾԽ կազմի ընտրություն:

(զեկ.՝ Ա.Սարուխանյան)

1.Լսեցին-Դպրոցի ԾԽ նախագահ Ն.Սահակյանը ներկայացրեց օրակարգը:

Որոշում է

Օրակարգում՝

2. 2023-24 ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ դպրոցի տնօրենի ուղերձը ծնողական կոլեկտիվին: (զեկ.՝ Ա.Սարուխանյան)

Լսեցին-2. դպրոցի տնօրեն Ա.Սարուխանյանի ուղերձը 2023-24 ուստարվա մեկնարկի առթիվ: Տնօրենը շնորհավորեց, բեղուն, անփորձանք ու խաղաղ ուսումնական տարի մաղթեց: Անդրադարձավ դպրոցի ռեժիմին, ներքին կարգապահական կանոններին: Նշեց, որ, սկսած 2023-24 ուսումնական տարվանից, հանրակրթական դպրոցների 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարաններում ներդրվել են հանրակրթության պետական նոր չափորոշիչները, և ուսուցումն ընթանում է նոր դասագրքերով: Վերոնշյալ 3 դասարաններում գործելու են երկարօրյա ուսուցման խմբեր, ընթերցանության և աստունքի խմբակներ, իսկ 7-րդ դասարանի յուրաքանչյուր աշակերտ ընդգրկված է լինելու առնվազն մեկ նախագծային աշխատանքում: Ներկայացրեց չափորոշչով նախատեսված հիմնական փոփոխությունները. 2-րդ դասարանում փոփոխվել են գնահատման սկզբունքները՝

միավորայինի փոխարեն արվելու է բնութագրող գնահատում, ավելացել է նոր առարկա՝ «Թվային գրագիտություն»: Հավելեց նաև, որ անցումային փուլերում միշտ էլ առաջանում են դժվարություններ, արժևորեց ծնողների անփոխարինելի դերը աշակերտների կրթության և դաստիարակության գործում՝ կոչ անելով նրանց ավելի սերտ համագործակցել դպրոցի և ուսուցիչների հետ, մեծացնել վերահսկողությունն իրենց երեխաների հանդեպ՝ փոփոխություններին հնարավորինս ավելի հարթ ու սահուն հարմարվելու և ուսումնական գործընթացն առավել արդյունավետ դարձնելու համար: Միաժամանակ նա հույս հայտնեց, որ ծնողական հանրույթը կշարունակի իր գործուն մասնակցությունն ունենալ դպրոցական առօրյայում և կաջակցի տնօրենությանն ու մանկավարժներին դպրոցում առաջացած խնդիրները համատեղ ուժերով լուծելու գործում:

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ի գիտություն ընդունել տնօրենի ուղերձը ու ներկայացրած տեղեկատվությունը:

2. 2-րդ, 5-րդ և 7-րդ 12-րդ դասարաններում հրավիրել ԾԽ նիստեր և մանրամասն ծանոթանալ ՀՊՉ փոփոխություններին ու նոր պահանջներին՝ իրենց երեխաներին աջակցելու նպատակով:

3. Խնդրել դպրոցին կցված բուժքույր Էլմիրա Ղահրամանյանին հաճախակի այցելել դպրոց աշակերտների սանիտարահիգիենիկ վիճակը ստուգելու համար:

Օրակարգում՝

3.Դպրոցի ԾԽ նախագահի հաշվետվությունը 2022-23 ուստարվա կատարած աշխատանքների և 2023-24 ուստարվա խնդիրների մասին:

(զեկ.՝ Ն.Սահակյան)

3.Լսեցին-դպրոցի ԾԽ նախագահ Ն.Սահակյանի զեկուցումը 2022-23 ուստարվա ԾԽ կատարած աշխատանքների և 2023-24 ուստարվա խնդիրների մասին: Նա նշեց որ ուսումնական տարվա ընթացքում ժամանակին գումարվել են ծնողական խորհրդի նիստերը: Դպրոցի և դասարանական ծնողական խորհուրդներն ակտիվորեն մասնակցել են դպրոցի առջև ծառացած խնդիրների լուծմանը: Կարևորվում է ծնող-դպրոց կապը: Ծնողական խորհրդի օգնությամբ դպրոցում լուծվում են բազմաթիվ տնտեսական խնդիրներ: Հաղորդողը նշեց, 2022-23 ուստարում դպրոց են հաճախել 215 աշակերտներ՝ 12 դասարանով: ՈՒսումնական տարվա ընթացքում դպրոցից տեղափոխվել է 7 աշակերտ, դպրոց է եկել 12 աշակերտ: Ուսումնական տարվա վերջում աշակերտների թիվը կազմել է 220: Գերազանցիկ են եղել 27 աշակերտներ, հարվածային՝ 41: Բացակայությունների թիվը կազմել է 4030 ժամ, ուսման առաջադիմությունը՝ 100%, իսկ ուսման որակը՝ 36,7%: Գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննություններ են անցկացվել 4-րդ, 9-րդ և 12-րդ դասարաններում: 4-րդ դասարանի 23 աշակերտ հանձնել է գիտելիքների ստուգում մաթեմատիկայից, մայրենիից և փոխադրվել է 5-րդ դասարան: 9-րդ դասարանի 17 սովորող, հանձնելով ավարտական քննությունները, ստացել է հիմնական կրթության վկայական, 12-րդ դասարանի 13 շրջանավարտներ ստացել են միջնակարգ կրթության ատեստատներ, նրանցից 4-ը ընդունվել են ՀՀ պետական բուհեր: 12-րդ դասարանի աշակերտ Գևորգ

Վարդանյանը հաջող հանդես է եկել ՆԶՊ-ի օլիմպիադայի հանրապետական փուլում, իսկ 10-րդ դասարանի աշակերտներ Սաթենիկ Գալստյանը և Լուսինե Հովսեփյանը՝ հայոց լեզվի, հայոց եկեղեցու պատմության մարզային փուլում:Էրիկ Հակոբյանի շախմատային նվաճումներով հպարտանում է ոչ միայն մեր դպրոցը, այլև ողջ մարզը: Ծնողական խորհուրդն իր գործուն մասնակցությունն է ունեցել, օժանդակել մի շարք ծրագրերի ու միջոցառումների կազմակերպչական աշխատանքներին:

Դասղեկների և ծնողական խորհուրդների ջանքերով իրականացվել են նաև երեխաների ազատ ժամանցի ու հանգիստի կազմակերպման հարցերը. բոլոր դասարաններն օգտվել են ԿԳՄՍ նախարարության աբոնենտային ծրագրով թատրոններ, թանգարաններ և մշակութային այլ օջախներ անվճար այցելելու իրենց իրավունքից՝ կազմակերպելով նպատակային ու ճանաչողական էքսկուրսիաներ:

Էլեկտրոնային մատյանների ու օրագրերի գործադրումը լայն հնարավորություն է ընձեռել ծնողներին հետևելու աշակերտների առաջադիմությանը: Բայց դեռևս շատ ծնողներ թերանում են այս հարցում: ԾԽ նախագահն ասաց, որ նորընտիր ԾԽ այս ուստարում ավելի ակտիվ ու գործուն մասնակցություն կունենա երեխաների կրթությանն ու դաստիարակությանը վերաբերող հարցերին՝ նպաստելով ուսման որակի բարձրացմանը և վերացնելով նախորդ ուստարում նկատված բացթողումները:

Արտահայտվեցին- 4-րդ դասարանի ԾԽ նախագահ Աննա Հովհաննիսյանը նշեց, որ դասարանի աշակերտների մեծ մասը քննությունների արդյունքում ստացել է բարձր գնահատականներ: Իրենց խնդիրն է միջին դպրոց փոխադրված երեխաների հանդեպ ավելի զգոն և ուշադիր լինել, քանի որ ոչ միայն առարկայացանկն է մեծացել, այլև՝ դասավանդող ուսուցիչների թիվը:

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հանձնարարել դպրոցի նորընտիր ծնողական խորհրդին ուշադրության կենտրոնում պահել սովորողների ուսումնադաստիարակչական խնդիրները, աշակերտների անհարգելի ուշացում-բացակայությունները:

2. Ուշադրության կենտրոնում պահել սննդի տրամադրման անվտանգության կանոնները:

Օրակարգում՝

4. «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրով դպրոցի նախակրթարանի սաներին և 1-4-րդ դասարանների աշակերտներին տաք սնունդ տրամադրելու մասին: (զեկ.՝ Ա.Սարուխանյան)

4.Լսեցին- դպրոցի տնօրեն Ա.Սարուխանյանի տեղեկատվությունը «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրով դպրոցի նախակրթարանի սաներին և 1-4-րդ դասարանների աշակերտներին տաք սնունդ տրամադրելու մասին: Նա ասաց, որ նախորդ ուստարում երեխաներին նախ տրամադրվել է չոր սնունդ, իսկ ճաշարանի նորոգման և կահավորման աշխատանքներն ավարտելուց հետո՝ տաք սնունդ: Նշեց, որ ողջ սպասքն ու գույքը փոխվել է, նորացվել, աշխատակիցները անցել են համապատասխան բուժզննում և ժամանակին վերսկսել իրենց աշխատանքները: Տնօրենն առաջարկեց ծնողներին սննդին առնչվող հարցերը համակարգելու համար ստեղծել հանձնախումբ:

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ի գիտություն ընդունել տնօրենի ներկայացրած տեղեկատվությունը:

1. Հանձնարարել դասարանական ծնողական խորհուրդներին սննդի համար հավաքագրվող ամենամսյա գումարների չափը սահմանել հետևյալ ձևով՝

1 երեխայի համար՝ 1000 դրամ, 2 երեխայի համար՝ 1500 դրամ, իսկ 3 երեխայի համար՝ 2000 դրամ

Օրակարգում՝

2022-23 ուստարվա դպրոցի ներքին գնահատման հաշվետվություն:

(զեկ.՝ Ա.Սարուխանյան)

4.Լսեցին- դպրոցի տնօրեն Ա.Սարուխանյանի տեղեկատվությունը 2022-23 ուստարվա դպրոցի ներքին գնահատման հաշվետվության վերաբերյալ: Նա նշեց, որ համաձայն սահմանված կարգի՝ 2022-23 ուստարվա դպրոցի ներքին գնահատման աշխատանքները կազմակերպելու համար ստեղծվել է հանձնաժողով՝ իր նախագահությամբ, և այն տեղադրվել է դպրոցի կայքէջում: Նա ծնողներին իրազեկեց, որ մանրամասն կարող են ծանոթանալ դպրոցի կայքում տեղադրված հաշվետվությանը, համառոտ ներկայացրեց ներքին գնահատման արդյունքները, ուր նշված են դպրոցի ձեռքբերումներն ու բացթողումները:

1. 2022-23 ուստարվա դպրոցի ներքին գնահատման աշխատանքները համարել բավարար:

2.Առաջարկել դպրոցի տնօրեն Ա.Սարուխանյանին նախորդ ուսումնական տարվա բացթողումներին անդրադառնալ ծնողական խորհրդի առաջիկա նիստում և ուղիներ փնտրել դրանք վերացնելու համար:

Օրակարգում՝

6.2023-24 ուստարվա ԾԽ կազմի ընտրություն:

(զեկ.՝ Ա.Սարուխանյան)

6.Լսեցին- դպրոցի տնօրեն Ա.Սարուխանյանի տեղեկատվությունը 2023-24 ուստարվա ԾԽ կազմի ընտրության կարգի վերաբերյալ:

Առաջնորդվելով «Ծնողական խորհուրդների մասին» օրինակելի կանոնադրությամբ՝ ծնողական ժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է

Դասարանական ծնողական խորհուրդների կողմից ընտրված ներքոհիշյալ անձանց ընդգրկել դպրոցի ծնողական խորհրդի կազմում՝

1. Ավետիսյան Մերի-1-ին դասարանի ԾԽ նախագահ

2. Տոնոյան Մարինե-2-րդ դասարանի ԾԽ նախագահ

3. Սարգսյան Նաիրա- 3-րդ դասարանի ԾԽ նախագահ

4. Մերգևոսյան Գայանե-4-րդ դասարանի ԾԽ նախագահ

5. Շուշանովա Օլյա- 5-րդ դասարանի ԾԽ նախագահ

6. Զաքարյան Ալիսա - 6-րդ դասարանի ԾԽ նախագահ

7. Մարգարյան Անահիտ- 7-րդ դասարանի ԾԽ նախագահ

8. Քոչարյան Նարինե- 8-րդ դասարանի ԾԽ նախագահ

9. Հախոյան Աննա- 9-րդ դասարանի ԾԽ նախագահ

10.Ավետիսյան Ազնիվ- 10-րդ դասարանի ԾԽ նախագահ

11. Հովհաննիսյան Անժելա- 11-րդ դասարանի ԾԽ նախագահ

12.Հակոբյան Անահիտ- 12-րդ դասարանի ԾԽ նախագահ

Ծնողական ժողովի նախագահ՝ Ն.Սահակյան

Քարտուղար՝ Գ.Մարգարյան